ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-7/23-3

ք. Երևան 25-ը հուլիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Հայրապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից,

2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 11 966 112 (տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար մեկ հարյուր տասներու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներր Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: Բոլոր ապրանքատեսակների մասով, պայմանագրի կատարման փուլում, համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը կիրառելի է /գնման առարկայի մատակարարման ժամանակ/:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Կոտայքի մարզ, գ. Զովունի 1 փ. 142
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արդշինբանկ» ՓԲԸ, Նաիրի մ/ճ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2473700214350000
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 03300526
ՀՎՀՀ 02522157	Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-7/23-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1	Թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ /մթերաթափոքների բաք ցինկապատ կափարիչով/	Մթերաթափոնների բաք ցինկապատ՝ ԳՕՍՏ 20558-82, տեսքը սեղանաձև, կափարիչով և բռնակներով: Հիմքի երկարությունը 265-275մմ, լայնությունը 245- 255մմ: Վերևի հատվածի երկարությունը 310-320մմ, լայնությունը 300-310մմ, բարձրությունը 500-510մմ: Մետաղի հաստությունը ոչ պակաս 1մմ: Բաքի երկու կողմերից ամրացված բռնակ: Բռնակի լայնությունը 28-35մմ, հաստությունը ոչ պակաս 1մմ, բռնակի եզրային մասից 3-5մմ-ի չափով մետաղը հետ ծալված դեպի հիմքը բռնակի ամրությունը ապահովելու համար: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը 95-105մմ, բարձրությունը հիմքից դուրս 45-55մմ: Բռնակը հիմքին ամրացված բաքի վերին եզրագծից դեպի ներքև 60-65մմ հեռավորության վրա կենտրոնում ոչ պակաս 4մմ հաստության, յուրաքանչյուր կողմում 2 հատ գամերով: Բաքը կափարիչով՝ կափարիչը բաքին միացված 2 ծխնու միջոցով: Կափարիչը նույնպես բռնակով: Մթերաթափոնների բաքի փաթեթավորումը ԳՕՍՏ 8273-75 թղթով: Յուրաքանչյուր արկղում 2 հատ: Արկղերը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
2	կաթսաներ /Կաթսա 6լ. ալումին. կափարիչ/	Կաթսա 6լ. ալումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալումինից: Կաթսան 22 համարի, կաթսայի տրամագիծը 220մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը 1,5-2մմ, կափարիչի հաստությունը 1-1,5մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Տարողության տեսակը <<Լտորր>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
3	կաթսաներ /Կաթսա 8լ. ալումին. կափարիչ/	Կաթսա 8լ. ալումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալումինից: Կաթսան 24 համարի, կաթսայի տրամագիծը 240մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը 1,5-2մմ, կափարիչի հաստությունը 1,5-2մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես, որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Տարողության տեսակը <<Լտորր>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
4	կաթսաներ /Կաթսա 10լ. ալումին կափարիչով/	Կաթսա 10լ. ալումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալումինից, կաթսան 26 համարի, կաթսայի տրամագիծը 260մմ, +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը 1,5-2 մմ, կափարիչի հաստությունը 1,5-2 մմ: Երկու բռնակով՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 15մմ: Տարողության տեսակը <<Լտորր>>: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
5	կաթսաներ /Կաթսա 20լ. ալումին կափարիչով/	Կաթսա 20լ. ալումինե, կափարիչով, ԳՕՍՏ 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալումինից: կաթսան 20 համարի, կաթսայի տրամագիծը 340մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը 3-5մմ: Կափարիչի հաստությունը 1,5-2մմ: Երկու բռնակով՝ պատրաստված ալումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես,որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 25մմ+/-2մմ և 45մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 100մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Φ10մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալումինե մետաղաթիթեղից,

		ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ:Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳOUS 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:
6	կաթսաներ /Կաթսա 40լ. ալյումին կափարիչով/	Կաթսա 40լ. ալյումինե, կափարիչով, ԳOUS 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Կաթսան 40 համարի, կաթսայի տրամագիծը 440մմ +/-5մմ, կաթսայի մետաղի հաստությունը 3-5մմ: Կափարիչի հաստությունը 1,5-2մմ: Երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես, որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 40մմ+/-2մմ և 60մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 100մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Ф14մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչի կենտրոնում բռնակ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 80մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳOUS 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
7	կաթսաներ /3 կաթսաներից բաղկացած կոմպլեկտ/	3 կաթսաներից բաղկացած կաթսաների լրակազմ, ԳOUS 17151-81 սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Տեսքը գլանաձև մեկը մյուսի մեջ մտնող: Մեծ կաթսան 15լ տարողության +/-5%, տրամագիծը 320մմ +/-2մմ, մետաղի հաստությունը 2.0-2.5մմ, միջին կաթսան 10լ տարողության +/-5%, տրամագիծը 260մմ +/-2մմ, մետաղի հաստությունը 1.5-2.0մմ, փոքր կաթսան 6լ տարողության +/-5%, տրամագիծը 220մմ +/-2մմ, մետաղի հաստությունը 1.5-2.0մմ: Յուրաքանչյուր կաթսա լինի երկու բռնակով՝ պատրաստված ալյումինից ամրանաձև, յուրաքանչյուրը ամրացված 4 հատ գամերով այնպես, որ բռնակի ձեռքի հենարանը զուգահեռ լինի կաթսայի հիմքին, գամերը՝ կաթսայի վերին եզրից դեպի ներքև 20մմ+/-2մմ և 40մմ+/-2մմ հեռավորության վրա: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը մեծ և միջին կաթսաներինը ոչ պակաս 100մմ+/-5մմ, փոքր կաթսայինը՝ ոչ պակաս 95մմ, բռնակի հաստությունը ոչ պակաս Ф8մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կաթսայի պատի կամ պատի վերին եզրի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կափարիչների կենտրոնում բռնակներ՝ պատրաստված տափակ ալյումինե մետաղաթիթեղից, ամրացված 2 հատ գամով: Բռնակի ձեռքի հենարանի երկարությունը ոչ պակաս 40մմ, բռնակի լայնքը ոչ պակաս 15մմ: Բռնակի ձեռքի հենարանի և կափարիչի միջև հեռավորությունը ոչ պակաս 20մմ: Կաթսայի կողային հատվածում արտաքին շերտի կողմից ռելեֆային մակնանշումով դրոշմավորված՝ կաթսայի տարողությունը և <<ՊՆ>> գրառումը: Գրառման բարձրությունը 5-10մմ: Յուրաքանչյուր կաթսան փաթեթավորված թղթով ԳOUS 8273-75: Փաթեթավորված կաթսան տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 4 հատ կաթսա: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
8	խոհանոցային սպասք /Տակդիր ալյումինե/	Տակդիր ալյումինե, սննդի միջավայրում թույլատրելի օգտագործելու համար ալյումինից: Տակդիրի տեսքը շրջանաձև տրամագիծը 175մմ +/-5մմ կամ քառակուսի 175X175մմ +/-5մմ, նախատեսված է սեղանների վրա տաք վիճակում մատուցվող 8լ-ոց, 6լ-ոց, 4լ-ոց կաթսաների և թեյնիկի տակ դնելու համար, մետաղի հաստությունը ոչ պակաս 2մմ, յուրաքանչյուր մակերեսից դուրս եկած 4 հատ ելուստ: Մի մակերեսի ելուստները դասավորված շրջանագծի առանցքով՝ ուղղահայաց և հորիզոնական, մյուս մակերեսի վրա դուրս եկած ելուստները դասավորված շրջանաձև: Ելուստի բարձրությունը 8մմ +/-1մմ, երկարությունը 73 մմ +/-5մմ: Տակդիրները փաթեթավորված թղթով ԳOUS 8273-75: Փաթեթավորված տակդիրները տեղադրված ստվարաթղթե արկղում: Յուրաքանչյուր արկղում 50հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնանշված՝ արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ, արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրման ամիսը և տարին:
9	կացիններ /կացին/	Միս կտրելու կացին՝ գլխիկը պատրաստված մեկ ամբողջական պողպատե մետաղից: Գլխիկի բարձրությունը 232-272մմ, կտրող բերանի լայնությունը 225-235մմ: Փայտե բռնակի ամրացման համար մետաղե գլխիկի մասում նախատեսված անցք, օվալաձև սրված դեպի կտրող մասը: Օվալի բարձրությունը 63-66մմ, լայնությունը 25-27մմ, փայտե բռնակի երկարությունը 350-450մմ: Փայտը հղկված՝ բոխի կամ թխկի:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ

Տնօրեն

Մ. Հ[illegible]

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքների մատակարարումը 2018թ. Ըստ 3-րդ եռամսյակի ամիսների, ընդ որում՝		
						հուլիս	օգոստոս	սեպտեմբեր
1	Թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ /մթերաթափոքների բաք ցինկապատ կափարիչով/	հատ	50	33 396	1 669 800		50	
2	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումին. կափարիչ/	հատ	100	4986	498 600		100	
3	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումին. կափարիչ/	հատ	100	5490	549 000		100	
4	կաթսաներ /Կաթսա 10լ. ալյումին կափարիչով/	հատ	100	6360	636 000		100	
5	կաթսաներ /Կաթսա 20լ. ալյումին կափարիչով/	հատ	100	10 986	1 098 600		100	
6	կաթսաներ /Կաթսա 40լ. ալյումին կափարիչով/	հատ	100	23 988	2 398 800		100	
7	կաթսաներ /3 կաթսաներից բաղկացած կոմպլեկտ/	հատ	100	24 960	2 496 000		100	
8	խոհանոցային սպասք /Տակդիր ալյումինե/	հատ	1000	690	690 000		1000	
9	կացիններ /կացին/	հատ	99	194 88	1 929 312		99	
Ընդամենը		11 966 112 (տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար մեկ հարյուր տասներկու) ՀՀ դրամ						

Ծանոթություն՝ բոլոր ապրանքատեսակների մասով, պայմանագրի կատարման փուլում, համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը կիրառելի է /գնման առարկայի մատակարարման ժամանակ/բոլոր ապրանքատեսակները չպետք է լինեն նախկինում օգտագործված, մատակարարման վայրը՝ ք. Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/23-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Միասնական անվանացանկի CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ., ընդ որում՝				
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ /մթերաթափոքների բաք ցինկապատ կափարիչով/	34921440/1	1669800	1669800	1669800	1669800	1669800
2	կաթսաներ /Կաթսա 6լ. ալյումին. կափարիչ/	44621140/4	498600	498600	498600	498600	498600
3	կաթսաներ /Կաթսա 8լ. ալյումին. կափարիչ/	44621140/5	549000	549000	549000	549000	549000
4	կաթսաներ /Կաթսա 10լ. ալյումին կափարիչով/	44621140/6	636000	636000	636000	636000	636000
5	կաթսաներ /Կաթսա 20լ. ալյումին կափարիչով/	44621140/7	1098600	1098600	1098600	1098600	1098600
6	կաթսաներ /Կաթսա 40լ. ալյումին կափարիչով/	44621140/8	2398800	2398800	2398800	2398800	2398800
7	կաթսաներ /3 կաթսաներից բաղկացած կոմպլեկտ/	44621140/9	2496000	2496000	2496000	2496000	2496000
8	խոհանոցային սպասք /Տակդիր ալյումինե/	39221110/8	690000	690000	690000	690000	690000
9	կացիններ /կացին/	44511190/2	1929312	1929312	1929312	1929312	1929312

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ
Տնօրեն

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-7/23-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-7/23-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N ___
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համար

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն